ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ ի.գ.դ., դոկտոր, Ղամբարյան Ա.Ս.
դասախոս, Սարկիսով Հ.Ա.

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Իրավաբանական գիտության պատմություն և մեթոդաբանություն

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն, Գործարարական իրավունք, Քրեական իրավունք և դատավարություն

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 Իրավա գիտություն

# ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**1. Ներածություն**

«Իրավաբանական գիտության պատմություն և մեթոդաբանություն» դասընթացը մասնագիտական ցիկլի հիմնական մասի առարկա է և որպես պարտադիր առարկա դասավանդվում է «Իրավագիտություն» մասնագիտության մագիստրատուրայում:

Այս դասընթացը նվիրված է իրավաբանական գիտության մեթոդաբանական ավանդույթների ուսումնասիրությանը, ինչպես նաև իրավագիտական գիտական իմացության ծագումնաբանության հարցերին, ներառյալ իրավաբանական գիտության հիմնական պատմական տիպերի վերլուծությունը:

«Իրավաբանական գիտության պատմություն և մեթոդաբանություն» դասընթացը նպաստում է մագիստրանտների հմտությունների ձևավորմանը՝ իրավունքի ուսումնասիրության գործում գիտական իմացության մեթոդների յուրացման միջոցով, վերացական վերլուծական մտածելակերպի հմտությունների զարգացմանը, ինչպես նաև սովորողների գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության խթանմանը:

Դասընթացը փոխկապակցված է ուսումնական պլանի այլ առարկաների հետ: Մասնավորապես, «Իրավաբանական գիտության պատմություն և մեթոդաբանություն» առարկան տրամաբանական և բովանդակային կապ ունի «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և մեթոդիկա», «Իրավունքի փիլիսոփայություն», «Քաղաքական և իրավաբանական ուսմունքների խնդիրներ»:դասընթացների հետ:

**Դասընթացի նպատակը և խնդիրները**

*Դասընթացի նպատակը* մագիստրանտներին իրավաբանական գիտության մեթոդաբանությունը ճիշտ հասկանալու կարողության ուսուցանումն է:

**Դասընթացի խնդիրները**

*Այս նպատակին հասնելու համար դրվում են հետևյալ խնդիրները.*

- Մագիստրանտների մոտ գիտական աշխարհայացքի և իրավաբանական գիտության ոլորտում առաջացող բարդ խնդիրների վերլուծության կարողությունների ձևավորում.
- Իրավական երևույթների բնույթի և սոցիալական դերի, դրանց ծագման պատմության և զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության համակողմանի մոտեցման ձևավորում:

**2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.**

**իմանա՝**

- ժամանակակից գիտական ճանաչողության մասին պատկերացումները.
- իրավաբանական գիտության մեթոդաբանության հասկացությունները և սկզբունքները.
- իրավագիտության զարգացման դարաշրջանային փուլերը:

**կարողանա՝**

- Կողմնորոշվել իրավունքի ճանաչողության մեթոդների մեջ.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները ժամանակակից իրավաբանական գիտության և իրավաբանական պրակտիկայի զարգացման տրամաբանության և օրինաչափությունների ըմբռնման համար.
- Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում.
- Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով օրենսդրության, տեսության և պրակտիկայի զարգացումը:

**2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)**

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

| Ուսումնական աշխատանքների տեսակները | Ամբողջը, ակ. ժամ. | Բաշխում ըստ կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 Կիս | 2 Կ | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | | | | |
| **Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը** | | | | | | | |
| Լսարանային պարապմունքներ | | | | | | | |
| Դասախոսություններ | 16 | | | | | | |
| Լաբորատոր աշխատանքներ | | | | | | | |
| Սեմինարներ | 16 | | | | | | |
| Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝ քննություններին նախապատրաստում | 76 | | | | | | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **քննություն** | **քննություն** | | | | | |

**2.3. Առարկայի ծավալը՝ 108 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:**

**2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների**

| Առարկայի բաժինները և թեմաները | Ընդամենը | Դասախոսու-թյուններ | Գործնական / սեմինար պարապմունքներ |
|---|---|---|---|
| 1 | 2=3+4 | 3 | 4 |
| **Թեմա 1.** Իրավաբանական հետազոտությունների հասկացությունը, կառուցվածքը և տեսակները | | | |
| **Թեմա 2.** Դոգմատիկ իրավաբանական հետազոտությունների մեթոդաբանություն: Սոցիալական իրավաբանական հետազոտությունների մեթոդաբանություն | | | |
| **Թեմա 3.** Համեմատական իրավաբանական հետազոտությունների մեթոդաբանություն: Պատմաիրավական հետազոտությունների մեթոդաբանություն | | | |
| **Թեմա 4.** Տեսական ճանաչողության նախնական փուլի գնոսեոլոգիական բնույթը | | | |
| **Թեմա 5.** Հերմեննտիկան որպես իրավաբանական հետազոտությունների մեթոդ | | | |
| **Թեմա 6.** Սիներգետիկան որպես իրավաբանական հետազոտությունների մեթոդ | | | |
| **Ընդամենը** | 32 | 16 | 16 |

**3. Դասընթացի թեմաները և ծավալները:**

**Թեմա 1. Իրավաբանական հետազոտությունների հասկացությունը, կառուցվածքը և տեսակները.**

Իրավաբանական հետազոտության հասկացությունը: Իրավաբանական հետազոտության կառուցվածքը: Իրավաբանական գիտական հետազոտությունների տեսակները:

**Թեմա 2. Դոգմատիկ իրավաբանական հետազոտությունների մեթոդաբանություն: Սոցիալական իրավաբանական հետազոտությունների մեթոդաբանություն.**

Իրավագիտությունում դոգմատիկ մեթոդի էության ուսումնասիրությունը՝ իրավական նորմերի վերլուծության, մեկնաբանման, համակարգման և դասակարգման գործընթացում:

Ուսումնասիրվում է իրավունքը որպես սոցիալական երևույթ՝ օգտագործելով սոցիոլոգիական հետազոտության մեթոդներ (հարցումներ, վիճակագրական վերլուծություն) իրավունքի գործարկման և սոցիալական գործառույթների ուսումնասիրության համար

**Թեմա 3. Համեմատական իրավաբանական հետազոտությունների մեթոդաբանություն: Պատմաիրավական հետազոտությունների մեթոդաբանություն.**

Տարբեր երկրների և իրավական համակարգերի նորմերի, ինստիտուտների և իրավական սկզբունքների համեմատական ուսումնասիրություն՝ իրավական համակարգերի համեմատման և լավագույն փորձի հայտնաբերման նպատակով:

Իրավունքի և իրավական ինստիտուտների առաջացման, զարգացման և փոփոխման գործընթացները պատմական պայմաններում՝ իրավունքի պատմական դինամիկայի և օրինաչափությունների բացահայտման նպատակով:

**Թեմա 4. Տեսական ճանաչողության նախնական փուլի գնոսեոլոգիական բնույթը.**

Տեսական հետազոտության սկզբնական փուլում գիտելիքի ձևավորման առանձնահատկությունները, հարցադրման, հիպոթեզի ձևավորման, մեթոդների ընտրության և գիտական ճանաչողության կառուցման հիմքերի ուսումնասիրություն:

**Թեմա 5. Հերմեննտիկան որպես իրավաբանական հետազոտությունների մեթոդ.**

Հերմեննտիկ մոտեցման՝ որպես իրավական տեքստերի, նորմերի և իրավական երևույթների մեկնաբանման մեթոդի, ինչպես նաև վերջինիս դերը իրավունքի իմաստային շերտերի բացահայտման գործընթացի ուսումնասիրություն:

**Թեմա 6. Սիներգետիկան որպես իրավաբանական հետազոտությունների մեթոդ.**

Քննարկվում է սիներգետիկայի կիրառությունը իրավագիտության մեջ՝ իրավական համակարգերը որպես բարդ ինքնակազմակերպվող համակարգեր դիտարկելու, անկայունության, հավասարակշռության և զարգացման գործընթացները վերլուծելու համար:

**4. Գրականության ցանկ**

***Հիմնական՝***

1. История и методология юридической науки: учебник / В.М. Сирых. – М.: Норма: ИНФРА-М, 2012. – 464 с.
2. Теоретико-методологические проблемы права. / Под ред. проф. М.Н. Марченко. Выпуск 2. – М., 2007

3. Марченко М.Н. Проблемы общей теории государства и права. Учебник в 2-х томах. – М., 2007.
4. Общая теория государства и права. Академический курс в трех томах. /Отв. ред. Проф. М.Н. Марченко. 3-е изд., дораб. и дополн. – М., 2007.
5. Нерсесянц В.С. Философия права. Учебник. 2-е изд. - М., 2006.
6. Царьков И.И. Развитие правопонимания в европейской традиции права. – СПб, 2006.
7. Керимов Д.А. Методология права (предмет, функции, проблемы философии права). – М., 2000.
8. Азаркин Н.М. Всеобщая история юриспруденции. Курс лекций. - М., 2003.
9. Государство и право на рубеже веков (Материалы всероссийской конференции). – М., 2000.
10. Новгорадцев П.И. Историческая школа юристов. - СПб., 1999.
11. Алексеев С.С. Самое святое, что есть у Бога на земле. Иммануил Кант и проблемы права в современную эпоху. - М.: НОРМА, 1998.

Լրացուցիչ՝

1. Нерсисянц В.С. Общая теория государства и права. - М., 2005.
2. Проблемы тории государства и права, истории политико-правовой мысли. Сборник работ учеников, друзей, коллег профессора О.Э. Лейста. – Алматы, 2005.
3. Розин В.М. Развитие права в России как условие становления гражданского общества и эффективной власти. Учебно-методическое пособие. - М.: Московский психолого-социальный институт, 2005.
4. Сафарян Г. Г. Очерки правовой мысли в Армении. - Ереван, 2006
5. Жоль К.К. Философия и социология права. - М., 2005.
6. Абдулаев М.И., Комаров С.А. Проблемы общей теории государства и права. Учебник. – СПб., 2003.
7. Азаркин Н.М. Всеобщая история юриспруденции. Курс лекций. - М., 2003.
8. Мирумян К. Из истории армянской политической мысли. - Ереван, 2002.
9. Проблемы общей теории государства и права. Учебник для вузов. /Под ред. Академика Российской академии наук, д.ю.н., профессора В.С. Нерсисянца. - М., 2001.
10. Теория государства и права. Хрестоматия в 2-х томах./ Автор-составитель В.В. Лазарев, С.В. Липень. – М., 2001.
11. Комаров С.А., Малько А.В. Теория государства и права. - М., 2001.
12. Раянов Ф.М. Юриспруденция: Курс лекций. – Уфа, 2001.
13. Проблемы теории государств и права: Сб. научных трудов. Вып. 4 / Отв. ред. Е.Л. Невзгодина. Омский гос. ун-т. - Омск: ОГУ, 2001.
14. Бачинин В.А. История философии и социологии права. - СПб., 2001.

15. Мухаев Р. Т. Хрестоматия по теории государства и права, политических и правовых учений. - М., 2000.
16. Хрестоматия по теории государства и права, политологии, истории политических и правовых учений. / Автор-составитель Р.Т. Мухаев. – М., 2000.
17. Государство и право на рубеже веков (Материалы всероссийской конференции). – М., 2000.
18. Бержель Ж.Л. Общая теория права. - М., 2000.
19. Бабаев В.К., Баранов В.М., Толстик В.А. Теория государства и права в схемах и определениях. - М., 1999. 9
20. Спиридонов Л.И. Теория государства и права. - М., 1999.
21. Черданцев А.Ф. Теория государства и права: курс лекций. – Екатеринбург, 1999.
22. Чиркин В.Е. Государствоведение. М., - 1999.
23. Новгородцев П.И. Историческая школа юристов. - СПб., 1999.
24. Трубецкой Е.Н. Энциклопедия права - СПб., 1998.
25. Назаренко Г.В. Теория государства и права: Учебное пособие. - М., 1998.
26. Венгеров А.Б. Теория государства и права. - М., 1998.
27. Сырых В.М. Теория государства и права. - М., 1998.
28. Сафарян Г. Г. Армянская политико-правовая мысль в XI-XIII веках. - Ереван, 1995.
29. Алексеев С.С. Теория права. – М., 1994.
30. Алексеев С.С. Государство и право. Начальный курс. – М., 1993
31. Чалоян В. К. История армянской философии (древние и средние века). - Ереван, 1975.
32. Хрлопян Г.Т. История армянской социальной философии. - Ереван, 1978. 10

**5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:**

**Խմբային քննարկում.** Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

**Ելույթներ ըստ թեմայի.** Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական և կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

**Ստուգարք.** Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները և ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքների արդյունքում: Գրավոր, վերլուծական առաջադրանքների և խնդիրների լուծում: